

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ. Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարարժեք բառեր). Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003, 384 էջ:

Աներկբա է, որ Մխիթարյան միաբանության հայրերի՝ Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի և Մկրտիչ Ավգերյանի «նոր բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատոր բառարանը (Վենետիկ, 1836-1837) գրաբարի բառարանագրության թագն ու պսակն է: Դրա, ինչպես և նույնքան կարևոր «Առձեռն բառգիրք Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1865) բառարանի լույսընծայումից հետո շուրջ հարյուր հիսուն տարի հին հայերենի քիչ թե շատ ընդգրկուն բացատրական բառարան չի ստեղծվել: Եղածները հիմնականում ուսումնական նպատակներ են հետապնդել և որպես կանոն զետեղվել գրաբարի ձեռնարկների, դասագրքերի վերջում (Ա. Աբրահամյան, Պ. Բեգիրյան, Պ. Շարաբխանյան, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան և ուրիշներ):

Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ «սառույցը կտրվեց» 1998թ., երբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց բանասիրական գիտությունների գոկտոր Լ. Խաչատրյանի «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարանը»: Այն ընդգրկում է ձևաբանորեն տարարժեք շուրջ 4000 բառարանային միավոր: Պետք է ասել, որ այդ բառարանը բառերի բացատրությունները տալիս է առանց բնագրային վկայությունների. ակներև էր, որ գրանց առկայությունն ավելի համոզիչ և խոսուն կդարձներ ընդգրկված բառային հարուստ նյութը:

Հիշյալ բառարանից հետո Լ. Խաչատրյանը ձեռնամուխ եղավ առավել ամբողջական, այս անգամ արգեն բնագրային նյութի վրա կառուցված բառարանի ստեղծմանը: Եվ ահա բոլորովին վերջերս գործարար Ռ. Մելքոնյանի հովանավորությամբ (միանգամայն գնահատելի և ընդօրինակելի քայլ), «Զանգակ-97» հրատարակչությունը լույս ընծայեց պրոֆեսոր Լ. Խաչատրյանի

«Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարարժեք բառեր)» գիրքը: Բառարանի պատասխանատու խմբագիրն է Գ. Թոսունյանը:

Ինչպես հուշում է ենթախորագիրը, բառարանն ընդգրկում է V-XI դդ. գրաբար մատենագրության մեջ գործածված այն բառերը, որոնք ձևաբանական արժեքի երկատվածություն ունեն: Դրանք երկարժեք են՝ գոյական//ածական (աւագ, այրի, աղքատ, ծեր, լեռնակեաց, մեծամեծ, մուկ և այլն), ածական//մակբայ (գուր, լաւ, խաղաղ, մեղմ, բարձրաձայն և այլն), մակբայ//նախագրություն (առաջի, արտաքս, զկնի, զհետ, յանդիման և այլն), նախագրություն//չաղկապ (բայց, բայց միայն, քան), եռարժեք՝ գոյական//ածական//մակբայ (աւելորդ, բազում, բարձր, ճարտար, սուտ, օտար և այլն), ածական//մակբայ//նախագրություն (գաղտ, առընթեր, զատ, բացագոյն, միաբան և այլն), մակբայ//նախագրություն//չաղկապ (մինչ, մինչև, իբր, իբրև), ածական//մակբայ//չաղկապ (ապա, արդ), հազվագեղ քառարժեք՝ ածական//գոյական//մակբայ//չաղկապ (համայն), ածական//մակբայ//եղանակավորող բառ//չաղկապ (միայն):

Բառարանում ընդգրկված հարուստ նյութն անշուշտ գիտական հետաքրքրություն է ներկայացնում: այս գիրքը կարող է խիստ օգտակար լինել գրաբար բառերի իմաստարժեքային դաշտում տեղի ունեցած տեղաշարժերը, բառի կապակցելիությունը, նաև պատմական իմաստաբանությունը ուսումնասիրողին: Բնականաբար, գրաբարի ձևաբանության և շարահյուսության մասնագետներն էլ այս բառարանի օգնությամբ ուշագրավ եզրակացությունների կարող են հանգել. չէ՞ որ ձևաբանական արժեքի փոփոխության հիմքում ընկած է առավելաբար բառի շարահյուսական գործառույթը:

Հարկավոր է նշել, որ բառարանն ստեղծվել է անսական սլաւոնաճ Հիմքի վրա: Խոսքիմասային տարարժեքութունը Հայերենագետ լեզվաբանի գիտական Հետաքրքրութայն առարկան է շուրջ երկու տասնամյակ: Մասնադիտական շրջանակներին ծանոթ են Լ. Խաչատրյանի երկու մենագրութունները՝ «Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ» (Երևան, 1985), «Խոսքիմասային տարարժեքութունն արգի Հայերենի կայուն կապակցութուններում» (Երևան, 1996), ինչպես նաև գիտական Հողվածները (Հիմնականում դրաբարի տարարժեք բառերի մասին), որոնք լույս են տեսել ակադեմիական Հանդեսներում:

Նկատելի է, որ գրախոսվող բառարանի բառահոգիվածները մշակված են խնամքով և գիտական բարեխղճութամբ: Նախ տրվում է Համաստատասիան արժեքը, ապա՝ նրա իմաստ(ներ)ը, նաև փոխաբերականները, տյունուհիտև ներկայացվում է մյուս արժեքը՝ իմաստային բնութագրով: յուրաքանչյուր իմաստի Համար, բոլոր դեպքերում կան բնագրային Համոզիչ օրինակներ: Հատկապես նշելի է բառի բազմիմաստութայն Հմուտ ներկայացումը: Միայն մեկ օրինակ բերենք: Այսպես, բուռն բառի Համար գրված է.

ԲՈՒՌՆ, գ. 1. Ձեռքի ախ. բուռնցք. Որչափ բուռն մի ալիւր ի ստփորի (Գ. Թագ. Ժէ. 12): 2. փխբ. Իշխանութուն. տերություն. Ընդ բուռն արքայի ի սպաս գոհիցն սլաշտել գայն (Բ. Մակ. Գ. 6): 3. Թագավոր. իշխան. ինքնակալ. բռնակալ. Որում ոչ ոք կարէր ի բռնաց եւ յիշխանաց ընդդէմ դառնալ (Ոսկ. Ես.): ա. 1. Ուժեղ, Հզոր, ամուր, կորովի. Եւ էր սա այր անհեղեղ անձամբ բարձր եւ լայն Հասակաւ, եւ բուռն եւ ցամաք մարմնով (Սեբ., 56): 2. Հաստատուն, միասնական, անբաժան. Ի թիկունս Հասանէին բուռն կազմութեամբ Աղուանք (Ա. գաթ., 17): 3. Սաստիկ, խիստ, անտանելի. Բուռն են ցաւք քո (Երեմ. Լ. 15): 4. Բնական, անխուսափելի. Բուռն է իբրեւ գմաՀ սէր (Երգ. Ը. 6): մ. Բուռնութամբ, ուժգին կերպով. Եւ ինքեանք գաչս թշնամեացն բուռն դէս կալեալ առ Հասարակ ի կուրութիւն դարձուցանէին (Բ. Մակ. Ժ. 30):

Կարող է Հարց առաջանալ. ո՞րն է բառարանի բերած նորությունը, որքանով է այն տարբեր գրաբարի նշանավոր բառարաններից (Նոր Հայկազյան (ՆՀԲ) և Առձեռն Հայկազյան): Փորձենք ցույց տալ դրանք:

ա. ՆՀԲ-ում վկայված բազմաթիվ բառեր, որոնք միարժեք են գիտվել, Առձեռն բառարանը Համարում է երկարժեք: Լ. Խաչատրյանը փորձել է լուծում տալ այս Հակասութայնը. որոշ դեպքերում բնագրային օրինակների վկայութամբ Հիմնավորում է այս կամ այն բառի տարարժեքութունը: Հմմտ. գլխաւոր, երամ, Հեթանոս, իմաստուհի և այլ բառահոգիվածներ:

բ. ՆՀԲ-ում երկարժեք Համարված մի շարք բառեր Առձեռն բառարանը նշում է իբրև միարժեք: Բառարանագիրն այս դեպքում էլ նորովի քննելով փաստերը՝ ձևաբանորեն տարարժեք բառերի ցանկից դուրս է թողնում իրականում միարժեք բառական միավորները, ինչպես աւազականոց, առգաստական, կամարակապ, Հանգիտական և այլն:

գ. Առձեռն բառարանում կան բազմաթիվ տարարժեք բառեր, որոնք ՆՀԲ-ում Հեն վկայվել: Ձևաբանորեն տարարժեք բառերի սույն բառարանում դրանք դերագանցապես Հեն ընդգրկվել: Պատճառներից մեկը թերևս այն է, որ դրանք Հիմնականում XI դ. Հետո ընկած ժամանակների գրաբարի վկայութուններ են:

դ. ՆՀԲ-ն բազմաթիվ դեպքերում բառի խոսքիմասային տարարժեքութունը ցուցադրում է բնագրային միևնույն նմուշի վրա: Այս բառարանում որոշ դեպքերում արժեքները բաշխված ենք տեսնում տարբեր նմուշների միջև: Օրինակ՝ ՆՀԲ-ն ածականի և մակբայի արժեքներ է տեսնում տարածիգ բառի մեջ և բերում բնագրային երեք վկայութուն: Այդ նույն վկայութունների Հետ Լ. Խաչատրյանը վարվում է Հետևյալ կերպ. մեկ օրինակում տեսնում է արժեքների Համատեղում (Առաւել քան զմեզ գթայ, եւ տարածիգ է նորա դրգանս եւ դորովումն քան զՀօր եւ զմօր — Գր. Մագիստրոս), Հաջորդներում մյուս արժեքները մակբայի (Ջնորայն առն բարւոյ ներբողինիւ տարածիգ գլխատակ պատուել —

նույն) և ածականի (Զհրաշատեսիլ երեսս իւր ուղղէր ընդգէմ տարածիգ վիմացն – ՆՀԲ), և այլն:

Ե. Կան նաև մասնակի տարբերություններ՝ Նոր բառարանի Հեղինակը Հստակեցրել է գրարարի բառարաններում ձևաբանորեն տարարժեք բառերին տրված իմաստային բացատրություններն ու վկայությունները: Այսպես, ՆՀԲ-ում արժեքակ-ը եռարժեք է (դոյական/ածական/մակբայ), իսկ այստեղ՝ երկարժեք (գոյական/ածական), թեթև բառի հրրորդ՝ գոյականական արժեքը Հստակ սահմանազատված է և այլն: Այդպես էլ առաել, գազանամարտ, դիւր, ծասակ, քաղցրածայն, քաջապէս և այլն:

Դ. Թվականները և դերանունները, որոնք Հայկադյան բառարանները տարարժեք են Համարում, այստեղ չեն դետեղվել:

Ե. Բառարանից դուրս են մնացել նաև բարբառային-ժողովրդական (այսպես կոչված ուսմական) բառերը:

Ը. Հայկադյան բառարաններում տարարժեք դիտված մի խումբ բառեր, մասնավորապես բուսանուններ և կենդանակերպների անվանումներ, Հեղինակը Համանուն է Համարել:

Անհրաժեշտ ենք Համարում նշել, որ Հաչվի են առնվել նաև Նորայր Բյուզանդացու այն բազմաթիվ դիտարկումները, որ անվանի Հայագետն արել է ՆՀԲ-ի առնչությունում: Ըստ այդմ էլ ՆՀԲ-ի միարժեք որոշ բառեր դիտվել են տարարժեք, երկարժեք մի շարք բառեր՝ եռարժեք, առհասարակ նորահայտ տարարժեք բառեր են շրջանառության մեջ գրվում:

Նշված բոլոր Համեմատությունները, վերլուծությունները Հեղինակին օգնել են առավել ճշգրիտ ներկայացնելու բառի արժեքները, իմաստները: Հատկապես իմաստ-

ների առնչությունը պիտի ասել, որ դրանք տրված են արդի բառաբանագրության սկզբունքների Համաձայն, մատչելի են, դիպուկ և Հստակորեն սահմանազատված:

Վստահաբար կարելի է ասել, որ արդի բառարանագրությունը Համալրվեց գրաբարի նոր, ուշագրավ բառարանով: Այն կնպաստի ինչպես տեսական մի շարք խնդիրների լուծման գործին, այնպես էլ գործնական շահ կբերի իբրև գրաբարի բացատրական բառարան (թեկուզև միայն ձևաբանորեն տարարժեք բառեր): Այն կրկին Հուշում է գրաբարի այնպիսի բացատրական բառարանի անհրաժեշտությունը մեզանում, որը պարունակի Հին Հայերենի Հիմնական բառային կազմը՝ արդիական բառարանային մշակմամբ և ամենակարևորը՝ բնագրային Համապատասխան օրինակներով:

Գրախոսվող բառարանը որքան էլ Հաջողված է և կազմված գիտական պատշաճ մակարդակով, այնուամենայնիվ կարելի է Հետևյալ դիտողություններն անել:

ա. Ցանկալի կլինեն բառերի արժեքները և իմաստները տալ պատմականության սկզբունքի պահպանումով:

բ. Բառարանի ցանկը կարելի է Համալրել նորահայտ այլ բառերով: Օրինակ՝ ձիաձուլ «ձիասեր, ձիավարություն սիրող» (ածական/գոյական). Համտ. Ոչ եթէ Հրահանգ ասպարիսաց ձիամուլ արշաւանք իցեն աստ... (Եւսերիոսի Եմեսացույ Մեկնութիւնք, Գ): Ընդ Հանկանակողս ուտել և ըմպել, ի գազանամարտիկս և ի ձիամուլս, ի տեսիլ արշաւանաց պարապել (ն.տ., ԺԱ), և այլն:

Այնուամենայնիվ, Հստակ է, որ գրաբարի ուսումնասիրության մեջ կարևոր մի քայլ է արվել: